

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2015 թվականի N 839-Ա

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 594-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով և 89-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 1-ը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների կողմից, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների, ստուգումները կարող են իրականացվել միայն՝

1) պետական կառավարչական հիմնարկներում, պետական ոչ առևտրային կամակերպություններում, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, 100 տոկոս պետական բաժնեմասով փակ բաժնետիրական ընկերություններում և 100 տոկոս համայնքային բաժնեմասով փակ բաժնետիրական ընկերություններում.

2) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում.

3) տնտեսավարող սուբյեկտների գրավոր դիմումի հիման վրա.

4) մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների.

5) հանրային անվտանգության, անձանց իրավունքների, կյանքի և առողջության պաշտպանության, պետության պաշտպանության և անվտանգության ապահովման դեպքերում (համապատասխան հիմնավորումներով)՝ միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր համաձայնությամբ.

6) սույն որոշման հավելվածով հաստատված տեսչությունների ստուգումների ստուգաթերթերով՝ ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ:

(1-ին կետը փոփ. 14.01.16 N 43-Ա, 09.06.16 N 597-Ա, 26.01.17 N 46-Ա)

2. Սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր համաձայնությունը՝

1) ստանալու նպատակով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ են ներկայացնում ստուգման անհրաժեշտությունը հիմնավորող տեղեկատվությունը, որն առնվազն պետք է ներառի՝

ա. ստուգման անհրաժեշտության առաջացման պատճառը և հիմնական ռիսկի գործոնները,

բ. առկա իրավիճակի նկարագիրը,

գ. ստուգման չիրականացման հետևանքով առաջացող հնարավոր վտանգները,

դ. ստուգման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքները.

2) տրամադրվելու կամ մերժելու դեպքում՝ վերջինիս վերաբերյալ և ստուգման անհրաժեշտությունը հիմնավորող տեղեկատվությունը տեղադրվում է www.e-gov.am կայքում:

3. 2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ իրականացվող ստուգումները, բացառությամբ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դեպքերի, կասեցվում են:

4. Ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» N 594-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Արախամյան

2015 թ. հունիսի 30
Երևան

Ց Ա Ն Կ

ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՏՈՒՎԱԹԵՐԹԵՐԻ

Պետական մարմնի և տեսչության անվանումները	Ստուգաթերթերը
1	2
<p>1. ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>Առողջապահական պետական տեսչություն</p>	<p>1.1. Հանրակրթական դպրոցների (ՏԳՏԴ ծածկագիր՝ 85.31.1, 58.31.2) ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 349-Ն որոշման հավելվածի N 26 ստուգաթերթ)</p> <p>1.2. Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) (ՏԳՏԴ ծածկագիր՝ 85.10.0) ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 349-Ն որոշման N 27 ստուգաթերթ)</p>
<p>2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</p> <p>Էներգետիկայի պետական տեսչություն</p>	<p>2.1. Ստուգաթերթ N 1 110կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ ենթակայանի (ԵԿ) և բաշխիչ սարքվածքի (ԲՍ) համար (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման N 1 հավելված)</p> <p>2.2. Ստուգաթերթ N 2 110կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ էլեկտրահաղորդման օդային գծի (ՕԳ) համար (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման N 2 հավելված)</p> <p>2.3. Ստուգաթերթ N 3 գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման էներգատեղակայանքի համար (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման N 3 հավելված)</p> <p>2.4. Ստուգաթերթ N 4 գազի համակարգի՝ գազաբշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքի համար (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման N 4 հավելված)</p> <p>2.5. Ստուգաթերթ N 5 տնտեսավարող սուբյեկտի (մասնաձյուղի) համար (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման N 5 հավելված)</p>
<p>3. ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>Օրինականության վերահսկողության տեսչություն</p>	<p>3.1. Կուսակցությունների գործունեության նկատմամբ օրինականության հսկողության պահանջների կատարման ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 624-Ն որոշման N 2 հավելված)</p> <p>3.2. Հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ օրինականության հսկողության պահանջների կատարման ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 624-Ն որոշման N 3 հավելված)</p>
<p>4. ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>Բնապահպանական պետական տեսչություն</p>	<p>4.1. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում, պահպանություն (ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 519-Ն որոշման N 11 ստուգաթերթ)</p> <p>4.2. Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, թափոնների վերամշակում (ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի</p>

	N 519-Ն որոշման N 6 ստուգաթերթ)
5. (Կեսն ուժը կորցրել է 09.06.16 N 597-Ա)	
6. ՀՀ ֆինանսների նախարարություն Լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչություն	6.1. Շահումով խաղի կազմակերպման և խաղատան կազմակերպման և լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 18-Ն որոշման N 2 հավելված) 6.2. Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 18-Ն որոշման N 1 հավելված)
7. ՀՀ ֆինանսների նախարարություն Աուդիտորական գործունեության հսկողության տեսչություն	7.1. Աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման հսկողության ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 99-Ն որոշման հավելված)
8. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն	8.1. Ավտոմոբիլային գազալցավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) համար (ՏԳՏԴ խմբ. 2՝ ծածկագիր 35.23) ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 132-Ն որոշման հավելվածի N 9 ստուգաթերթ)
9. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	9.1. Հանրային սննդի կազմակերպությունների համար ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման N 1 հավելված): 9.2. Մսամթերքի արտադրության կազմակերպությունների համար ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման N 3 հավելված): 9.3. Կաթնամթերքի արտադրության կազմակերպությունների համար ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման N 4 հավելված): 9.4. Կրեմային հրուշակեղենի արտադրության կազմակերպությունների համար ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման N 6 հավելված): 9.5. Ոչ կենդանական ծագման մթերքների և խոհարարական արտադրանքի ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 5-ի N 970-Ն որոշման N 2 հավելված): 9.6. Ձկնամթերքի արտադրության կազմակերպությունների համար ստուգաթերթ (ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 5-ի N 970-Ն որոշման N 3 հավելված)

(հավելվածը խմբ. 14.01.16 N 43-Ա, փուլ., լրաց. 09.06.16 N 597-Ա)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան